# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 30 " մայիսի 2011թ. № 46-Ա

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱԶՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ,159-րդ և 161-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թվականի նոյեմբերի 5-ի «Մշտական հիմունքներով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող քաղաքացիների և այդպիսի գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին հատկացվող արտոնությունների մասին» N 487 որոշման, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանին 2011թ.հունիսի 6-ից տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդի և լրացուցիչ արձակուրդի մասը՝ 14 աշխատանքային օր:

Աշխատանքի մեջ համարել 24.06.2011թ.:

Համաձայն «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի՝ վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

2.Ռազմիկ Ղազարյանի՝ արձակուրդում գնվելու ընթացքում աշխատակազմի ղեկավարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գրիգոր Թադևոսյանի վրա:

3.Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. մայիսի 30
ք. Կապան